ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 38

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

01.06.2019թ. ք. Իջևան

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 26-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Ցուցուլյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ժամը 13:30

1. ԵՊՀ ԻՄ-ի ՄՌԿ բաժնի գործունեության մասին:
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՄՌԿ բաժնի վարիչ Վ. Եգանյան/
2. ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի գործունեության մասին:
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի վարիչ Ա. Եգանյան /
3. ԵՊՀ ԻՄ-ի տնտեսական մասի գործունեության մասին:
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնտեսական մասի վարիչ Վ.Սարգսյան /
4. ԵՊՀ ԻՄ-ի հաշվապահության գործունեության մասին:
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյան /
5. Ընթացիկ հարցեր:
   5.1 ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի կանոնադրության հաստատում:
   5.2 Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական եվ ներբուհական

կրթաթոշակների հատկացման կանոնակարգի հաստատում: /նոր խմբագրությամբ/:

5.3 Կրթական ծրագրերի հաստատում:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին</u>՝ « ԵՊՀ ԻՄ-ի ՄՌԿ բաժնի գործունեության մասին » հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ՄՌԿ բաժնի վարիչի պաշտոնակատար **Վ. Եգանյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ՄՌԿ բաժնը 2018թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2019թ. մայիսի 31-ը ընկած ժամանակահատվածում աշխատել է ըստ ռազմավարական պլանի:

Նշեց, որ Մասնաճյուղն ունի 262 աշխատող, որից **վարչակառավարչական անձնակազմ – 54** (Տնօրենություն – 3, Հաշվապահություն – 7, ՈՒՄՎ – 11, ՄՌԿ – 9, ՄԿՈԱ – 3, Արտաքին կապերի բաժին – 5, Գրադարան – 3, ՀՈՒԲ – 8, Դեկան – 4, Դեկանի տեղակալ – 1, Ինժեներական և տնտեսական անձնակազմ-42, Տնտեսական մաս-31, ՏՀՍԶ բաժին-5, ԳՆՄՊԸ-6, ՈՒՕ անձնակազմ- 16 (ԲՆՖ-2, ՀՈՒՄԳՖ-6, ՏՆՏՖ-3, ԿԱՖ-5): Պրոֆեսորադասախոսական անձնակզմը՝ **173 հոգի է**, որից ՀՈՒՄԳՖ – 85, ՏՆՏՖ-37, ԲԳՖ-31, ԿԱՖ-14, Արտակարգ իրավիճակների և մարմնակրթության և սպորտի ամբիոն – 6:

Կադրերի բաժինը աշխատում է ՀԾ1 և ՀԾ2 ծրագրերով:

Պրոֆեսորադասախոսական կազմում ի պաշտոնե ունենք.

10 պրոֆեսոր, որից 8 դրույքային և 2 ժամավճարային,

47 դոցենտ, որից 39 դրույքային և 8 ժամավճարային,

59 դասախոս, որից 34 դրույքային և 25 ժամավճարային,

7 ասիստենտ նկարիչների միության անդամ,

57 ասիստենտ, 48 դրույքային և 9 ժամավճարային,

1 ասիստենտ լրագրողների միության անդամ,

1 դրույքային դասախոս, դիզ. միության անդամ,

2 ժամավճարային ասիստենտ դասախոս, սպորտի վարպետ ռեկորդակիր,

1 դոցենտ դրույքային գրողների միության անդամ:

Քարտուղարությունում ընդունվել են 719 դիմումներ, որից աշխատանքի ընդունման՝ 110 , ուսանողական իրավունքների վարականգնելու՝ 43, տեղեկանք տրամադրելու՝ 5, ուսումը դադարեցնելու՝ 3, չվճարվող արձակուրդից օգտվելու՝ 22, զեղջի՝ սոց. անապահով, սահմանամերձ գյուղերի, մարտական հերթապահություն իրականացված՝ 333, տարկետումից վերադառնալու, աշխատանքից ազատվելու , առարկայական պարտքեր վերահանձնելու և այլն՝ 203:

Ընդունվել են մոտ 1417 զեկուցագրեր, մուտքի գրություններ, լիազորագրեր, ծանուցումներ, ելքի գրություններ:

Զինվորական առնչություն ունեցող ուսանողների թիվը ըստ ֆակուլտետի և ՀՈՒԲ-ի 743 ուսանող է: Կազմվել են պաշտոնի անձնագրեր, համաձայնագրեր, պայմանագրեր:

Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում դասընթացի շրջանակներում կասմակերպվել են 3 դասընթացներ.

1-ին դասընթացին մասնակցել են 24 դասախոս, որից

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ - 17 դասախոս

Տնտեսագիտության ֆակուլտետ - 3 դասախոս

Բնական գիտությունների ֆակուլտետ - 4 դասախոս:

2-րդ դասընթացին - 22 դասախոս, որից

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ - 15 դասախոս

Տնտեսագիտության ֆակուլտետ - 1 դասախոս

Բնական գիտությունների ֆակուլտետ - 6 դասախոս:

3-րդ դասընթացին- 7 դասախոս, որից

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ - 3 դասախոս

Տնտեսագիտության ֆակուլտետ - 2 դասախոս

Բնական գիտությունների ֆակուլտետ - 2 դասախոս:

Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի շրջանակներում Անգլերենը ակադեմիական միջավայրում դասընթացի A1 մակարդակի վերապատրատմանը հրամանագրվել է 29 դասախոս, որից

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ - 17

Տնտեսագիտության ֆակուլտետ - 5

Բնական գիտությունների ֆակուլտետ - 5

Կիրառական արվեստի ֆակուլտետ - 2

Մուդլ համակարգի դասընթացով վերապատրաստում է անցել 14 դասախոս, որից.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ - 5

Տնտեսագիտության ֆակուլտետ - 3

Բնական գիտությունների ֆակուլտետ - 6:

Ընդհանուր կամընտրական դասընթացներից կազմակերպվել է 4 դասընթաց.

1-ին դասընթացին մասնակցել է 44 դասախոս, որից

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ - 23,

Տնտեսագիտության ֆակուլտետ - 7 ,

Բնական գիտությունների ֆակուլտետ - 11 ,

Կիրառական արվեստի ֆակուլտետ - 2 ,

Աշխատակից - 1:

2-րդ դասընթացին *մասնակցել է 38 դասախոս, որից*

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ - 22 դասախոս,

Տնտեսագիտության ֆակուլտետ - 6 դասախոս,

Բնական գիտությունների ֆակուլտետ - 6 դասախոս

Կիրառական արվեստի ֆակուլտետ - 3 դասախոս

Աշխատակից - 1

3-րդ դասընթացին մասնակցել է 31 դասախոս, որից

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ - 16 դասախոս,

Տնտեսագիտության ֆակուլտետ - 4 դասախոս,

Բնական գիտությունների ֆակուլտետ - 6 դասախոս,

Կիրառական արվեստի ֆակուլտետ - 2 դասախոս,

Աշխատակից - 3:

4-րդ դասընթացին մասնակցել է 19 դասախոս, որից

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ - 9 դասախոս,

Տնտեսագիտության ֆակուլտետ - 3 դասախոս,

Բնական գիտությունների ֆակուլտետ - 3 դասախոս,

Կիրառական արվեստի ֆակուլտետ - 2 դասախոս,

Աշխատակից - 2 :

Արտահայտվեցին – ԵՊՀ-ի պրոռեկտոր Մ. Սողոմոնյանը, ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը և այլոք:

Մասնավորապես ԵՊՀ պրոռեկտոր Մ. Սողոմոնյանը հարցրեց թե արդյոք ԵՊՀ ԻՄ-ում կատարվել է պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրություն: Հարցին ի պատասխան տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը նշեց, որ Մասնաճյուղում պրոֆեսորադասախոսական կազմից լրիվ դրույքաչափով աշխատողների թիվը 17 է և ըստ էության մրցույթի կարիք էլ չի եղել և չի անցկացվել մրցութային ընտրություն:

Տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը նշեց, որ ունենք ՄՌԿ բաժնի նոր պաշտոնակատար, և հույս ունենք կունենանք ուժեղ և աշխատող բաժին նոր վարիչի գլխավորությամբ:

Այնուհետև առաջարկ եղավ բաժնի գործունեությունը գնահատել բավարար:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 38/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- ԵՊՀ ԻՄ-ի ՄՌԿ բաժնի գործունեությունը գնահատել բավարար:

<u>Օրակարգի երկրորդ՝</u> «ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի գործունեության մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի վարիչ **Ա. Եգանյանի** զեկույցը: Նա նշեց, որ.

- 2019թ. փետրվարի 1-ին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Վ. Ցուցուլյանի՝ №14§15 հրամանով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստեղծվեց Արտաքին կապերի բաժինը, որի կազմում ներառված են ԵՊՀ ԻՄ-ի՝ 2019թ. հաստիքացուցակով նախատեսված հետևյալ աշխատակիցները՝ բաժնի վարիչ, հասարակայնության հետ կապերի և մամուլի պատասխանատու, կայքի պատասխանատու, շրջանավարտների և արտաքին շահառուների հետ

տարվող աշխատանքների համակարգող, մարքեթինգային աշխատանքների համակարգող:

ԱԿ բաժնի հիմնական նպատակն է ապահովել մասնաճյուղի համագործակցությունը ուսումնական հաստատությունների, պետական և ոչ պետական կառույցների և կազմակերպությունների հետ: Բաժնի գործունեության հիմնական ուղղություններն են՝ նպաստել հանրային կապերի միասնական համակարգի զարգացմանը, օգտագործել ԵՊՀ-ի հնարավորությունները ԵՊՀ ԻՄ-ի վերաբերյալ Հայաստանում և այլ երկրներում տեղեկատվական նյութերի ստեղծման և տարածման առումով, զարգացնել ԵՊՀ ԻՄ-ի կայքէջը՝ նպաստելու տեղացի և արտասահմանցի դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը և ուղղորդմանը դեպի Մասնաճյուղ, ապահովել ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների, ուսանողների և պոտենցիալ գործատուների միջև մշտական կապ, շրջանավարտներին ներգրավել ԵՊՀ ԻՄ-ի ծրագրերում, կազմել արտաքին շահակիցների հետ համագործակցության ծրագրեր և ապահովել դրանց իրականացումը, պատրաստել այլ բուհերի, կառույցների ու կազմակերպությունների հետ պայմանագրերի և հուշագրերի նախագծեր:

Իր հեղինակության ամրապնդման, հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով ԵՊՀ ԻՄ-ը վարում է տեղեկատվության տարածման, գովազդային-լրատվական, քարոզչական համապատասխան քաղաքականություն: Մասնաճյուղը մի շարք մեխանիզմներով ապահովում է իր ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը: 2011թ. հոկտեմբերի 1-ից գործում է մասնաճյուղի ինտերնետային կայքը **/http://www.ijevan.ysu.am/**, որը ԵՊՀ ԻՄ-ի գործունեության լուսաբանման, թափանցիկության ապահովման ամենամատչելի և կարևոր միջոցներից մեկն է:

Մասնաճյուղի ընդհանուր և ընթացիկ կառավարման գործընթացների հասանելիությունն ապահովելու նպատակով ԵՊՀ ԻՄ-ի կայքէջի

«Փաստաթղթեր» /http://ijevan.ysu.am/documents/ բաժնում պարբերաբար տեղադրվում են ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի որոշումներն ու նիստերի արձանագրությունները, բոլոր կանոնադրությունները, կանոնակարգերը և կարգերը, հայեցակարգերը, այլ նորմատիվ փաստաթղթեր, մասնաճյուղի տնօրենության որոշումներն ու նիստերի արձանագրությունները (2019թ. մայիսի 27-ի դրությամբ տեղադրվել է **102 փաստաթուղթ**):

Մասնաճյուղի շրջանավարտներին թափուր աշխատատեղերի մասին իրազեկելու, նրանց կարիերային նպաստելու նպատակով կայքում դրվում են խորհրդատվություններ և հայտարարություններ՝ «Մրցույթներ, թափուր հաստիքներ», «Խորհրդատվություն», «Շրջանավարտների և կարիերայի կենտրոն», «Գրանցում» ենթաբաժիններում (2018-2019 ուստարում՝ 2018թ. սեպտեմբերից մինչև 2019թ. մայիսի 27-ն ընկած ժամանակահատվածում տեղադրվել է **9 «Մրցույթներ, թափուր հաստիքներ»**):

ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքէջի «Ինֆորմացիա» (http://ijevan.ysu.am/information/) բաժնի «**ԶԼՄ-ները մեր մասին**» էջում տեղադրվում են մասնաճյուղի վերաբերյալ տարբեր ԶԼՄ-ների կողմից հրապարակված **հոդվածներ ու տեսանյութեր. հաշվետու ժամանակահատվածում** հեռուստատեսությամբ (մասնավորապես՝ Հանրային հեռուստաընկերությամբ), “YouTube”-ով, տարբեր կայքերով լուսաբանվել է ԵՊՀ ԻՄ-ին վերաբերող **6 նորություն՝ 4 հոդված, 2 տեսանյութ (2018թ. օգոստոսի 7 նորության փոխարեն):**

ԵՊՀ ԻՄ-ի զարգացման ռազմավարական ծրագրի կարևոր խնդիրներից է ապահովել հասարակության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային ծրագրերում մասնաճյուղի առավելագույնս ներգրավումը **(ՌԾ, խնդիր III ա/ Հանրային ներգրավում և ծառայություններ/)**: Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի ապահովման արդյունավետ միջոցներ են հարցումները, արտաքին շահակիցների ներգրավումը գիտխորհրդի կազմում, մասնաճյուղի կայքի հարց ու պատասխանի բաժինը,

մարզային տարատեսակ միջոցառումների կազմակերպումը կամ մասնակցությունները դրանց, մշտական այցելությունները տարածաշրջանի համայնքներ, ուսումնական և արտադրական կազմակերպություններ և այլն:

Կայքի այցելուներն իրենց հուզող հարցերի կամ լրացուցիչ տեղեկությունների համար հարցեր են ուղղում մասնաճյուղի տարբեր վարչական և գիտակրթական մարմիներին: Հարցերն ընթերցվում և հասցեագրվում են համապատասխան ստորաբաժանման ղեկավարին, որի պատասխանն էլ տեղադրվում է կայքում: Այս մեխանիզմը գործում է 2012 թ. սեպտեմբերից, և 2018-2019 ուստարվա ընթացքում տեղադրվել է **6 հարցուպատասխան:**

Մասնաճյուղի տեղեկատվական քաղաքականության իրականացման նպատակով լուսաբանվում և պաշտոնական կայքում տեղադրվում են ոչ միայն բուհի ներքին գործընթացներին վերաբերող բազմաբնույթ նորություններ, իրադարձություններ, հայտարարություններ, այլև ՀՀ ԿԳՆ, Գիտության կոմիտեի, ԵՊՀ-ի, այլ բուհերի ու կրթագիտական հաստատությունների պաշտոնական կայքերից ևս ձեռք են բերվում անհրաժեշտ տեղեկություններ և ներկայացվում հանրությանը:

Մասնավորապես՝ 2018թ. սեպտեմբերից մինչև 2019թ. մայիսի 27-ն ընկած ժամանակահատվածում ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքէջի **«Ինֆորմացիա»** բաժնում տեղադրվել է **244 նորություն, 145 հայտարարություն, 3 իրադարձություն, 8 տնօրենության նիստ, ԵՊՀ ԻՄ-ի կողմից կազմակերված 2 գիտական կոնֆերանս ու նստաշրջան,** նորաստեղծ երկու՝ **«Հարցազրույցների շարք մեր շրջանավարտների հետ»** էջում՝ **12 հարցազրույց, «Մեծերի ասույթները, նամակները, մանրապատումները»** էջում՝ **9 նյութ,** որոնք ունեն ուսանողներին մոտիվացնելու միտում:

2019թ. հունվար ամսից ԵՊՀ ԻՄ-ի կայքէջի բարելավման նպատակով ստեղծվեց «Հարցազրույցների շարք մեր շրջանավարտների հետ» էջը, որը ներառում է **ԵՊՀ ԻՄ-ի** տարբեր տարիների՝ հաջողության հասած

շրջանավարտների հետ **հարցազրույցների շարքը**, իսկ փետրվար ամսից՝ «Մեծերի ասույթները, նամակները, մանրապատումները» էջը, որտեղ յուրաքանչյուր շաբաթ պարբերաբար տեղադրվում են հայ և աշխարհահռչակ մեծերի մտքի գոհարներից, մանրապատումներից:

Նոր գրաֆիկների տեղադրումից հետո հների համար ստեղծվել է համապատասխան արխիվ, որտեղ ընդգրկվում են վերջին մի քանի տարիների գրաֆիկները:

Մասնաճյուղի պաշտոնական կայքն անընդհատ թարմացվում է, արդիականացվում են դրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները. բացվում են նոր էջեր, տարբեր լրատվամիջոցներով, “Facebook” սոցիալական ցանցով, “Youtube”-ով հրապարակվում են մեր մասին նյութերը:

Ակտիվացնելով ԵՊՀ ԻՄ-ի յութուբյան էջը և ավելացնելով հետևորդների քանակը՝ այս ուստարվա մեջ ներբեռնել ենք 9 նոր տեսահոլովակ:

Նորությունների լուսաբանման հետ կապված՝ կայքի եռալեզու տարբերակի (հայերեն, ռուսերեն, անգլերեն) աշխատանքներն ընթացքի մեջ են: **2018թ. սեպտեմբերի 17-ից մինչև 2019թ. մայիսի 27-ը** կայքի **ռուսերեն** բաժնում տեղադրվել է **367 նյութ** (հայտարարություն, նորություն, իրադարձություն), **անգլերեն** բաժնում՝ 442 **նյութ**:

Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներից են նաև 2011 թվականից **“Facebook”** սոցիալական ցանցում գործող **ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էջը** (https://www.facebook.com/ysuib), որը **2019թ. մայիսի 27-ի դրությամբ** միջինում ունի մինչև **4000 հետևորդ** և հավանումներ (**2018թ. օգոստոսի դրությամբ ուներ 2800 հետևորդ)**, նույն սոցիալական ցանցում գործող **Ուսանողական խորհրդի** էջը(https://www.facebook.com/EPHIMUX/), որն ունի **1120 հետևորդ** (**2018թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ ուներ 1040 հետևորդ)**, **Ուսանողական գիտական ընկերության** էջը՝ **644 հետևորդ** (**2018թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ՝ 543 հետևորդ)** և այլն:

Մասնաճյուղի պաշտոնական կայքում առկա նյութերը տարածվում են նշված էջերի և խմբերի միջոցով, էջերի հետևորդները և խմբերի անդամները (ուսանողներ ու աշխատակիցներ, դիմորդներ ու շրջանավարտներ, լայն հասարակայնության ներկայացուցիչներ, առհասարակ արտաքին շահակիցներ) կիսվում են մասնաճյուղի հետ առնչություն ունեցող նյութերով, ուղղում են իրենց հետաքրքրող հարցերը, ստանում պատասխաններ, կատարում առաջարկներ, թողնում մեկնաբանություններ, կարծիքներ և գնահատականներ համալսարանի գործունեության տարբեր ոլորտների մասին:

Ըստ ամիսների՝ կայքի այցելությունները ներկայացնում են հետևյալ պատկերը.

Ամենաշատ այցելությունները դիտվել են մարտ ամսին՝ 47, 000 դիտում (նախորդ տարվա մարտի 39,000 դիտումի փոխարեն), իսկ 2018-19 ուստարվա կտրվածքով այցելությունների թիվը հասնում է միջինում 362,000 դիտումի (նախորդ տարվա 340,000 դիտումի փոխարեն):

ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքը **2018 թ. օգոստոսի դրությամբ** ուներ **214 էջ, իսկ 2019 թ. մայիսի 27-ի դրությամբ՝ 243 էջ:**

Հաշվետու ուստարում մշակվել է առաջարկությունների փաթեթ՝ կապված կայքի դիզայնի, տարածվածությունը խթանելու և դինամիկ զարգացում ապահովելու հետ, տնօրենության կողմից արժանացել է հավանության և ուղարկվել ԵՊՀ: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

2018-19 ուստարում, ըստ ՌԾ-ի, ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ տարվել են մի շարք աշխատանքներ:

Մասնավորապես՝ էլեկտրոնային տարբերակով հավաքագրվել են ԵՊՀ ԻՄ-ի՝ 1994-2009 թթ. շրջանավարտների անձնական տվյալները:

ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների տվյալների բազայում թարմացվել են 2010-2017 թթ. շրջանավարտների անձնական տվյալները, հավաքագրվել և

համալրվել են 2018-2019 թթ. շրջանավարտների տվյալները, փոփոխության է ենթարկվել և թարմացվել աշխատանքի մասին ինֆորմացիան:

Ավարտական կուրսերի ուսանողներին և շրջանավարտներին մատուցվել է **61** անհատական խորհրդատվություն, որի ընթացքում կազմվել են ստանդարտներին համապատասխան ռեզյումեներ, մոտիվացնող նամակներ:

Մատուցվել են **37** լրացուցիչ կրթական ծառայություններ, որոնք ներառում են **25** դասընթաց, ուսանողների հետ **12** հանդիպում: Դրանք վարում էին կառավարիչներ, տնօրեններ, ՀԿ-ների նախագահներ, Տավուշի թեմի հոգևոր առաջնորդը, գրողներ, հիմնադրամների տնօրեններ:

6 կազմակերպություններում իրականացվել են ճանաչողական այցեր, որոնք նպաստել են ուսանողների պրակտիկ հմտությունների ձեռքբերմանը:

Ավարտական կուրսերի ուսանողների հետ պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ, որոնց ընթացքում ներկայացվել են ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ տարվող աշխատանքները համակարգողի գործառույթները, վերհանվել են ուսանողների խնդիրները, արձանագրվել առաջարկները, ապահովվել է մասնաճյուղի ու նրա առանձին ստորաբաժանումների հետ շրջանավարտների ու արտաքին շահակիցների կապը:

Հաշվետու ուստարում **53** արտաքին շահակիցների հետ իրականացվել են հանդիպումներ, որոնց ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն թափուր հաստիքների, տեղեկատվության տրամադրման, մասնաճյուղում դասընթացների կազմակերպման, փորձի փոխանակման վերաբերյալ:

Արտաքին շահակիցների կողմից տրամադրվել է **38** թափուր հաստիքների մասին ինֆորմացիա, որի շնորհիվ աշխատանքի է տեղավորվել **24**-ը: Աշխատանքներից **2**-ը եղել է ժամանակավոր (2 ամիս տևողությամբ), եղել են թափուր աշխատատեղեր, որոնց աշխատանքային պայմանները հարմար չեն եղել, 1-ի դեպքում չունեինք համապատասխան կադրեր: Մյուս աշխատանքները դեռ հարցազրույցի և փորձաշրջանի անցկացման փուլում են:

52 արտաքին շահակիցների հետ անցկացվել է նաև շրջանավարտների պատրաստվածության մակարդակը ստուգող հարցում:

2019թ. ապրիլ ամսին Արտաքին կապերի բաժնի նախաձեռնությամբ կնքվել է 2 պայմանագիր՝

1. Իջևանի համայնքապետարանի հետ՝ անվանական կրթաթոշակ տրամադրելու մասին (01.04.2019. կտրամադրվի մասնաճյուղի բակալավրիատի և մագիստրատուրայի վերջին 3 կիսամյակում անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողին 5 ամիս շարունակ՝ 10.000 ՀՀ դրամի չափով):
2. Հայ առաքելական եկեղեցու Տավուշի թեմի հետ (04.04.2019. առավել մեծ հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողներին կտրամադրվի դրամական պարգևատրում 10.000 ՀՀ դրամի չափով 10 ամիս):

2018-19 ուստարվա ընթացքում արտաքին համագործակցության շրջանակներում ԵՊՀ ԻՄ-ի կողմից կնքվել է 6 հուշագիր.

1. «Իջևանի ՀՀԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ,
2. «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի հետ,
3. **«Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամի հետ,**
4. Տավուշի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնի հետ,
5. «Հայաստանի *մանուկներ*» բարեգործական *հիմնադրամի հետ,*
6. Վալանսի «Հայ մշակութային ժառանգություն և ընկերներ» ասոցացիայի հետ:

Արտաքին կապերի բաժնի կողմից ընթացքի մեջ է հետևյալ ծրագրերի և աշխատանքների իրականացումը.

1. Ճապոնիայի դեսպանատան կողմից իրականացվող դրամաշնորհային ծրագիր:
2. Տավուշի երիտասարդական ակումբների դաշնության ծրագիր:
3. «ԵԽՀ հայաստանյան Կլոր սեղան» հիմնադրամի դրամաշնորհ:
4. «ՀԷՑ» ՓԲԸ «Աղստև» մասնաճյուղի հետ կկնքվի պայմանագիր (հեռակա ուսուցման համակարգի ուսանողները հասարակական բարձր ակտիվության համար կպարգևատրվեն 10.000-ական ՀՀ դրամի չափով 5 ամիս):
5. «Ծիրան» սուպերմարկետների ցանցի Իջևանի մասնաճյուղի հետ կկնքվի պայմանագիր, և սոցիալապես անապահով ուսանողներին կցուցաբերվի դրամական օգնություն:
6. Սեպտեմբերից կբացվի անգլերեն լեզվի անկյուն:
7. Կմշակվի մարքեթինգային գործողությունների հայեցակարգ:

Արտահայտվեցին – ԵՊՀ-ի պրոռեկտոր Մ. Սողոմոնյանը, տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը, տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը և ուսանողներ Լ. Ներսիսյանը, Ա. Ավետիսյանը և այլոք:

Մասնավորապես **Գ. Հովհաննիսյանը** հարցրեց թե կա արդյո՞ք հասարակական ակտիվության սանդղակ, և արդյոք ճիշտ ենք անում, որ հասարակական ակտիվությունը խրախուսում ենք նյութական միջոցներով, որը և իմաստազրկում է հենց հասարակական ակտիվություն հասկացությունը:

Ա. Եգանյանը նշեց, որ այս պահին ՈՒԽ –ի շրջանակներում գործում է հասարակական ակտիվության գնահատման սանդղակ, իսկ ուսանողներ **Լ. Ներսիսյանը և Ա. Ավետիսյանը** կարևորեցին ուսանողներին խրախուսելու և հասարակական ակտիվության մոտիվացիան բարձրացնելու անհրաժեշտությունը:

Ա. Ցուցուլյանը նշեց, որ հասարակական ակտիվությունը գնահատելու և խրախուսելու միջոց է նաև ԱԿԲ-ի կողմից տրվող հավաստագրերը և պատվոգրերը:

Մ. Սողոմոնյանը նշեց, որ Մասնաճյուղի կայքի թարգմանության ժամանակ լավ կլիներ, որ ավելի շատ ուշադրություն դարձվեր կրթական ծրագրերի թարգմանությանը, և առհասարակ թարգմանվեր այն մասերը, որոնք անհրաժեշտ են արտաքին համագործակցության համար, այնուհետև Մ. Սողոմոնյանը հարցրեց, թե արդյոք արդյունավետ է գործում Բուհ – աշխատաշուկա կապը, արդյոք արտաքին շահակիցները մասնակցում են կրթական ծրագրերի մշակմանը:

Ա. Եգանյանը, Է. Ղարայանը, Մ. Ճաղարյանը նշեցին, որ արտաքին շահակիցների հետ համագործակցությունը տեղի է ունենում կրթական ծրագրերի մշակման գործում, պրակտիկաների կազմակերպման պրոցեսում, շրջանավարտներին աշխատանքով ապահովվելու գործընթացում, նրանց կարծիքը հաշվի է առնվում հարցումների միջոցով:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 38/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի գործունեությունը գնահատել բավարար:

<u>Օրակարգի երրորդ՝</u> « ԵՊՀ ԻՄ-ի տնտեսական մասի գործունեության մասին » հարցի կապակցությամբ լսեցին **ԵՊՀ ԻՄ-ի տնտեսական մասի վարիչ Վ.Սարգսյանի** հաղորդումը: Նա նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում Տնտեսական մասի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

Մասնաճյուղի սպորտդահլիճին հարակից տարածքում պատրաստվել է ցատկուղի և ցատկափոս, որի համար օգտագործվել է 6մ³ ավազ, 3մ³ ավազակոպճային խառնուրդ և 700կգ ցեմենտ: Ընդհանուր առմամբ ծախսվել է 103362 դրամ նյութերի ծախս: Աշխատանքները իրականացվել են Մասնաճյուղի տնտեսական մասի աշխատողների կողմից: Կիրառական արվեստի ֆակուլտետի խեցեգործության արվեստանոցում տեղադրվել է կավի թրծման վառարան: Տարանջատվել է արվեստանոցի սենյակից գիպսակարդոնի միջոցով և կատարվել է վերանորոգման աշխատանքներ: Վերանորոգման աշխատանքները իրականացնելու համար նյութական ծախսը կազմել է 56 475 դրամ: Թիվ 1 մասնաշենքի տարածքում ծաղկանոցները տարանջատելու և գեղեցիկ տեսք տալու համար տեղադրվել են 34 գ/մ ֆելզիտե և ցեմենտ-բետոնե բորդյուրներ: Մասնաճյուղի վարչական մասնաշենքում ավելացվել է 1 հատ ջեռուցման կաթսա, որի տեղադրման համար կատարվել է 14800 դրամի նյութական ծախս: 20000 դրամ աշխատավարձ: Կատարվել է 1 և 2 մասնաշենքի աստիճանավանդակների կողային մասերի փակում: Աշխատանքները իրականացնելու համար կատարվել է 24700 դրամի նյութական ծախս: Մասնաճյուղի մասնաշենքերում կատարվել և կատարվում են վառված լամպերի փոխարինում լեդ տեսակի լամպերով, կատարվում են փչացած ծորակների վերանորոգում և փոխարինում նորերով: Մասնաճյուղի մասնաշենքերի լսարաններում և միջանցքներում կատարվում են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: Հյուրանոցային համալիրում տեղադրվել է նոր ջեռուցման կաթսա: Տեղադրման աշխատանքների համար կատարվել է 88 140 դրամի նյութական ծախս: Թիվ 3 մասնաշենքում գրադարանի համար պատրաստվել է գրապահոց, և սպորտդահլիճի վահանակի վերանորոգում:

Պատրաստման համար կատարվել է 139 700 դրամի նյութական ծախս: Թիվ 1 մասնաշենքի տարածքում կատարվել է ջրահեռացման աշխատանքներ, որի պատրաստման համար կատարվել է 49 500 դրամի նյութական ծախս: Թիվ 1-ի մասնաշենքից 3-րդ մասնաշենք տանող աստիճանները վերանորոգման աշխատանքները իրականացնելու համար կատարվել է 5800 դրամի նյութական ծախս: Սպորտդահլիճում լուսատուներին ճաղավանդակները պատրաստելու համար կատարվել է 14400 դրամի նյութական ծախս: Հիմնական աշխատանքը իրականացվել են տնտեսական մասի աշխատակիցների միջոցով:

Արտահայտվեցին – Տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը, ԵՊՀ պրոռեկտոր Մ. Սողոմոնյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը:

Արտահայտվողները մասնավորապես շեշտեցին բաժնի պլանավորված և կատարված աշխատանքների համընկնման կարևորությունը, նշվեց նաև որ կարևոր է ունենալ նախաձեռնողականություն և ապահովվել ուսանողակենտրոն ուսուցում կազմակերպելու գույքային հիմքերը:

Տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը նշեց, որ Մասնաճյուղում կազմվել է հանձնաժողով, որը կատարում է կարիքների վերհանում բարձրորակ կրթական արդյունք ստեղծելու համար անհրաժեշտ նյութական հիմքերը ստեղծելու համար:

Այնուհետև առաջարկեցին Տնտեսական մասի գործունեությունը գնահատել բավարար:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 38/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- ԵՊՀ ԻՄ-ի տնտեսական մասի գործունեությունը գնահատել բավարար։

<u>Օրակարգի չորրորդ</u>՝ « ԵՊՀ ԻՄ-ի հաշվապահության գործունեության մասին ›› հարցի կապակցությամբ լսեցին **ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ Մ. Միսիթարյանի** հաղորդումը։

Նա նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Սեպտեմբերի 1ից ավելացել է ԵՊՀ ԻՄ աշխատակիցների աշխատավարձը 15% ով։
2. Տարեվերջին ԵՊՀ ԻՄ հիմնական աշխատակիցները ստացել են դեկտեմբեր ամսվա աշխատավարձի չափով պարգևատրում։
3. Պրոֆեսորի աստիճան ունեցող անձնակազմի աշխատավարձը նախկինում 190426դր, այժմ կազմում է 220426 դր, ավելացվել է 30000դր։
4. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի միջին աշխատավարձը նախկինում 160052դր էր, այժմ կազմում է 185554 դր։
5. Վարչական աշխատողների միջին աշխատավարձը նախկինում 154648 դր էր, այժմ կազմում է 169180դր։
6. Ամբիոնի վարիչների աշխատավարձը ավելացվել է 15000դր ։
7. Իրականացվել են մի շարք սոցիալական ծրագրեր. դրամական օգնություն, աշխատակցի երեխային ուսման վճարի զեղչի

տրամադրում, տոնական և մշակութային միջոցառումների տոմսերի հատկացումներ:

8. Մայր բուհի աջակցությամբ հանգստյան և մարզաառողջարանային բազաներից ԵՊՀ ԻՄ աշխատակիցները և նրանց ընտանիքի անդամները օգտվում են 50 % զեղչով:
9. Ներդրված ավանդների գծով գործող տարեկան տոկոսադրույքը ավելացել է 9,5 % տոկոսից 10,6 %, որի արդյունքում ստացել ենք ավելի բարձր եկամուտ և ունենք կայուն ֆինանսական հոսք:
10. Բարելավվել է տպագրատան աշխատանքի որակը, որի արդյունքում մուտքերը թիվը աճել է 82 հզ –ից 308 հզ.:
11. Կատարվել են տեխնիկական և կազմակերպչական աշխատանքներ ռեսուրսախնայողության ուղղությամբ՝ մասնավորապես վերանորոգվել է ջեռուցման համակարգը, հսկողություն է սահմանվել կոմունալ վճարների խնայողության գծով:
12. Ներդրվել է հաշվապահական ՀԾ -7 հաշվառում իրականացնող նոր ծրագրեր:
13. Ժամանակին կատարվում է ստացվող հիմնական միջոցների, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների հաշվառումը և դրանց արտացոլումը հաշվապահական հաշվառման հաշիվներում:
14. Համագործակցությունը ԱրդՇին բանկի հետ այսուհետ օնլայն է իրականացվում, որը բավականին օպտիմալ արդյունք է ապահովում:
15. Պարբերաբար թարմացվել և նորացվել են ԵՊՀ ԻՄ համակարգիչները , հին և պարամետրերով թույլ համակարգիչները փոխարինվել են նոր և հզոր համակարգիչներով: Հաշվետու ժամանակաշրջանում ստացվել է 1 100 հզ.դրամի համակարգիչներ և սարքավորումներ: Արագացվել է ինտերնետ կապը:

16. ԵՊՀ ԻՄ ի աշխատակիցները պարբերաբար անցնում են համապատասխան մասնագիտական վերապատրաստում՝այդ թվում նաև հաշվապահության:
17. 2018-2019ուս տարում՝ 1ին կիսամյակում 220 ուսանողներ , 2-րդ կիսամյակում 216 ուսանող, ուս. վճարի զեղչից են օգտվել :
18. Իրականացվել է պրակտիկաների բարելավմանն ուղղված ծրագիր,որին հատկացրել ենք նյութական և ֆինանսական ռեսուրսներ: Ծախսը կազմել է 338,2 հզ դր:

Արտահայտվեցին – Տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը, ԵՊՀ պրոռեկտոր Մ. Սողոմոնյանը, տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, ուսանողներ Ա. Ավետիսյանը, Հ. Ղարագյոզյանը:

Մասնավորապես ուսանողները ցանկություն հայտնեցին առանձնացնել ՈԻԽ-ին և ՈԻԳ-ին տրվող ֆինանսական միջոցները:

Ա. Ցուցուլյանը նշեց, որ մեր ֆինանսական միջոցների 82% տոկոսը գնում է աշխատավարձի, անհրաժեշտ է ստեղծել այլ դրամակն միջոցներ, մասնավորապես կարելի է առևտրայնացնել ուսանողների աշխատանքները:

Այնուհետև առաջարկեցին գործունեությունը գնահատել բավարար:

ՈՐՈՇՈՒՄ N 38/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- ԵՊՀ ԻՄ-ի հաշվապահության գործունեությունը գնահատել բավարար:

<u>Ընթացիկ հարցեր:</u>

4.1 Լսեցին- «ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի կանոնադրության հաստատում›› հարցի վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 38/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4.2. Լսեցին «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական եվ ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի հաստատում /նոր խմբագրությամբ/ ›› հարցի վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 38/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական եվ ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը /նոր խմբագրությամբ/՝ համաձայն հավելված 2-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2018թ.-ի մայիսի 26-ի թիվ 30 նիստում հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական եվ ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4.3. Լսեցին « Անգլերեն լեզու լեզու և գրականություն (023102.00.6) կրթական ծրագիրը հաստատելու մասին›› հարցի վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 38/7

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Հաստատել Անգլերեն լեզու լեզու և գրականություն (023102.00.6)՝ կրթական ծրագիրը համաձայն հավելված 3-ի:

4.4. Լսեցին « Ֆինանսներ (041201.00.6) կրթական ծրագիրը հաստատելու մասին ›› հարցի վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 38/8

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Հաստատել Ֆինանսներ (041201.00.6) կրթական ծրագիրը համաձայն հավելված 4-ի։

4.5. Լսեցին « Ֆրանսերեն լեզու և գրականություն (023102.00.6) կրթական ծրագիրը հաստատելու մասին » հարցի վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 38/9

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Հաստատել Ֆրանսերեն լեզու և գրականություն (023102.00.6) կրթական ծրագիրը համաձայն հավելված 5-ի։

4.6. Լսեցին « Հայոց լեզու և գրականություն (023101.00.6) կրթական ծրագիրը հաստատելու մասին » հարցի վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 38/10

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Հաստատել Հայոց լեզու և գրականություն (023101.00.6) կրթական ծրագիրը համաձայն հավելված 6-ի։

4.7. Լսեցին « Զբոսաշրջություն (101501.00.6) կրթական ծրագիրը հաստատելու մասին›› հարցի վերաբերյալ։

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 38/11

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Հաստատել Զբոսաշրջություն (101501.00.6) կրթական ծրագիրը համաձայն հավելված 7-ի։

Գիտական խորհրդի նախագահ_____ Ա. Վ. Ցուցուլյան

Գիտքարտուղար_____Մ. Ս. Աթոյան